

ԶԳԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԲԱՌԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԶԱՓԱԾՈՅՈՒՄ

Զգայական ընկալում արտահայտող բառերը լայնորեն կիրառվում են գեղարվեստական գրականության մեջ՝ հատկապես պոեզիայում՝ ծառայելով նկարագրվող երևույթի տեսանելի պատկերմանը: Դրանք խոսքը դարձնում են պատկերավոր, կենդանի ու արտահայտիչ, հնարավորություն են տալիս խուսափելու խոսքի միօրինակությունից, հարստացնում բանաստեղծական պատկերը:

Քննելով զգայական ընկալում արտահայտող բառերի լեզվաոճական դրսևորումները՝ մենք առանձնացրել ենք հատկապես գույն, համ ու հոտ արտահայտող բառերը, ցույց տվել դրանց ոճական կիրառությունները Պ. Սևակի չափածոյում:

Կապված լինելով իրականության զգայական ընկալման ամենահզոր զգայարանի՝ տեսողության հետ՝ գունամուկները ներկայացնում են առարկաների ու երևույթների արտաքին ամենացայտուն՝ տեսողական-գունային կողմը: Զգայական ընկալման մեջ տեսողականից դուրս մնացած հատկանիշները հիմնականում համ ու հոտի մեջ են: Այնպես, ինչպես բնության մեջ է, մարդու համար էլ համի ու հոտի հատկանիշները բնութագրող պահանջ ունեն, և դրանով է հաճախ ճանաչելի դառնում մարդը: Ամեն մի հեղինակ ունի իր նախասիրած գունային մակդիրները, զգայական ընկալումներ արտահայտող ձևերը՝ ելնելով ստանձնակերպից, հուզող քեմաներից ու գրական ճաշակից: Պ. Սևակը բացում է արտաքին աշխարհի գույների ու բույրերի ամբողջությունը՝ լեցուն կենդանի շնչառությամբ, հույզերի ու ապրումների գեղեցկությամբ:

Զգայական ընկալման մեր առանձնացրած բառերի ոճական արժեքը ներկայացնելու համար լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցներից մենք քննել ենք մակդիր, համեմատություն, հակադրություն, փոխաբերություն, շրջասույթ, դարձվածք:

Պ. Սևակի չափածոյում գույն, համ ու հոտ արտահայտող բառերով կառուցված մակդիրներն իրենց հմուտ ու ճաշակով գործածությամբ, երևույթների նուրբ ու խոր բնութագրումներով խտացում, պատկեր են առաջացնում՝ գույնի, համ ու հոտի զգացողությունը դարձնելով առարկայական, հավաստի: Մակդիրը դրսևորվում է տարբեր խոսքի մասերով՝ գոյական, բայ, առավելապես՝ ածական, ինչպես նաև բառակապակցություններով ու դերբայական դարձվածներով: Պատկերավորության առումով ավելի տպավորիչ են գոյականով արտահայտված մակդիրները, որոնք առարկան կամ երևույթը բնութագրում են ոչ թե մեկ հատկանիշով, այլ հատկանիշների մի ամբողջ խմբով և ավելի ամբողջական ու ավարտուն պատկերայնությամբ են օժտում խոսքը, օրինակ՝ ուղղականով մակդիր-որոշիչը՝ «Սրժաթ խութի» (Ա, 152)*, «գմրուխտ քփեր» (Դ, 49), «ածուխ աչքեր» (Դ, 95), «լեղակ երկինք» (Դ, 270) և այլն: Եր-

* Բոլոր հղումները կատարված են ըստ Ա. Պապոյան «Պարույր Սևակի չափածոյի բառարան» (հ. հ. 1-2, 1981-1982) գրքի: Այսուհետ էջերը կնշենք օրինակներին կից:

բեմն գոյական որոշիչը կարող է հանդես գալ նաև թեք հոլովներով՝ «Ախ, թե ծամով-համով նույն աղջիկը մնար» (Ա, 220): Գոյականի գործիականի ու վերջավորությունը խոսակցական լեզվում երբեմն որպես ածանց է գործածվում, և այս ածանցով *համով* բառածին իր որոշչային կիրառությամբ բանաստեղծի լեզվին հաղորդում է ժողովրդական խոսքի երանգներ և արտացոլում ազգային լեզվատառնողությունը:

Գույնի, համ ու հոտի իմաստույթ պարունակող մակդիրների ամենաբնորոշ հատկանիշը առարկայականությունն է: Գույն, համ ու հոտ արտահայտող ամենատարածված բառերի հմուտ գործածությունը, բանաստեղծական հայացքի խորությամբ պայմանավորված պատկերավոր բնութագրությունը բառի մեջ արթնացնում են նոր նրբիմաստներ, և եզրերի ոճական-իմաստային համադրությամբ ու հակադրությամբ ստեղծվում են թարմ ու տարողունակ մակդրային կապակցություններ: *Կանաչ* գունանունը, օրինակ, հեղինակի գրչի տակ գործածվում է բոլորովին նոր զուգորդությամբ՝ «Ու ծառանում էր հեղափոխության մակերեսացության *կանաչ* ալիքը» (Դ, 82): Տեղին ու չափավոր գործածվող մակդիրներն ուժեղացնում են խոսքի՝ զգացմունքայնությունը: Պ. Սևակի չափածոյում հաճախ են միախառնվում գույներն ու բույրերը՝ զուգահեռաբար բնութագրելով երևույթը. զուգակցվում են երանգը, բույրն ու համը: Դույզն ու ապրումը շոշափելի են դառնում գունապատկերի, լույսի, բույրի և զգայական այլ հատկանիշների ամբողջության մեջ, և զուգընթաց այդ զգացողությունների համադրությունը ստեղծում է մակդիրների գործածության համադրություն: Բույրերի, գույների, ծայների սուր զգացողությունները խառնվում են ու հեջորդում մեկը մյուսին, լրացնում են իրար և առարկայական դարձնում վերացական հասկացությունը՝ «Ապակիների լուրջան վրա ||*Անբուրմունք-անգույն* ծաղկունքը ցրտի լուռ թախծում էին» (Բ, 120): «Իսկ Այգեստանի բույրերից *արբշիռ* ||Եվ Արտամեսի հոտերից *գինով* ||խոր քուն է մտնում քամին Ոստանում» (Դ, 207):

Գույնը, բույրը ընդհանուր անվանումներ են, որ կոնկրետացնում են առանձին բառի հետ՝ տալով նրան մակդրային նշանակություն: Բանաստեղծի աչքը տարբերում է էական ու պատահական հատկանիշները՝ ընդգծելով մերթ մեկը, մերթ մյուսը՝ «Վարդերի *կարմիր* ճիչն են ես լսում|| Իմ ծխամորճի *դառն* ծխի միջից|| Ու ծմռան *ճերմակ* սառն ծխի միջից» (Ա, 459): «*Աշնանաբույր-դեղնաբույր* այս մետաքսի շորը բո ||Այնպես լավ է քեզ սագում» (Ա, 222): Գունային մակդիրները ոչ միայն առարկայի արտաքին տեսողական պատկերն են ստեղծում, այլև ունեն իրենց ներքին բովանդակությունը և պատկերին հաղորդում են յուրահատուկ արտահայտչականություն՝ «Վախենում եմ, որ զնալիս հետս աստղերի ցուլը տանեմ Եվ աչքերի *գիշերական* ու ծովական խորքը տանեմ» (Զ, 118):

Բնությունը բուրում է, մայր բնության մեջ գույնզգույն ծաղիկներն էլ լուռ իրենց բույրերն են հյուսում, «կոճակն է քացվում *զմրուխտ* թփերի» (Դ, 49): «*Ապրիլական արբշիռ* բույրեր, ||Գարնանային ծաղկածլում...Եվ *ծաղկաբույր* գիշերվա մեջ...||խորշակը նույն անցավ նաև Պոլսո քոլո՜ր հայ թաղերով» (Դ, 189): «*Ծաղկաբույր* գիշերը» ավելի տեսանելի է դարձնում գալիք աղետը՝ հայ կյանքի ողբերգությունը:

Արշալույսին, երբ չքանում են մղձավանջները, նահանջում անմարմին երազները, կյանքը դարձյալ բույրեղով է նորոգվում՝ «Օղը երազներ է տեղափոխում... ծնված *թարմ* բուրմունքից հացի» (Ա, 327): Կյանքը չի վերջանալու: մարդը կարող է վերսկսել ու շարունակել զգալ հավերժական բույրերը՝ «Կրկին գարնան հոտը *քնկոտ* լի Պիտի պառկի քո ռունգներում լիվ արթնացնի արյունը քո» (Բ, 194):

Երբեմն էլ բույր արտահայտող մակդիրներով ստեղծվում են հեքանոս պատկերներ՝ մեզ տանելով անհիշելի ժամանակներ՝ «Գրավաճառ խանութների ցուցափեղկում լի բուրում էին դեռ *հեքանոս արքշոռ* բույրեր... Խառնվելով Գողգոթայի ծաղիկների հոտին *անրով*» (Դ, 158):

Ամենավերացական հասկացություններն անգամ զույն, համ ու հոտ արտահայտող մակդիրների միջոցով բացատրվում են ու դառնում առարկայական: Ի՞նչ համ կարող է ունենալ հայրենի հողի կարոտի զգացումը, մայրենի բարբառը՝ «Մեր կերած հացին քսել է նա ժանգ, լիբայց և... դարավոր բնիկ վայրերի լիկորեստի լեղի կարոտն է քսել... *Քաղցրացել* ենք մենք մեր *քաղցր* բառով, լի մեր *հայրենահամ անուշ* բարբառով» (Ա, 509): Բանաստեղծի մոտ սպասումն անգամ իր համն ունի՝ *տտիպ ու թթու*՝ «Զե՛ս գարմանա, կիսակա՛նաս, լի Որ այս *տտիպ* սպասումն է թթվում արդեն» (Բ, 172):

Արտահայտչական հզոր դեր են կատարում այն մակդիրները, որոնց փոխաբերականության հիմքում ընկած է անձնավորումը: Բնության երևույթներին, անշունչ առարկաներին հաղորդվում է կենդանություն, և պատկերը դառնում է ապրող, իսկ ընկալումը՝ ուժեղ և խորը՝ «Եվ երկրագնդի *կիսարյունաքամ-գունատ* ճակատին լի Արյունոտ մատով աղվեսագրվեց 1915 թիվը» (Դ, 297): «Շրջել խնդությունից *շիկնած* լի երևանում, Այգիներում մեր ճոխ» (Ա, 40): «Սևանոթ մի անպ, լի մ աչքերի առաջ... Լուսնի ճաղն է կրծում» (Բ, 190): «... Որ *կապուտայա* ջրերում մեր ջինջ լի մի խորթ մակույկ չլողա» (Զ, 9):

Պարագայական մակդիրներից մեր ընտրանքում հանդիպում են *քաղցրորեն* և սրան հակամիջ *դառնորեն* բառերը: Սրանք, բնութագրելով ոչ թե առարկան, այլ գործողությունը, կատարում են ձևի մակբայ-պարագայի դեր և մակդիրն բնորոշ հատկանիշ են ձեռք բերում հեղինակային հատուկ վերաբերմունքի շնորհիվ՝ «Օտար հովերի ապտակին հլու լի Պիտի *դառնորեն* դարձի գան դարձյալ» (Ա, 515): «Եվ *քաղցրորեն* սիրտը քեզ տանջում է» (Ա, 190):

Պ. Սևակը գործածում է նաև դերբայով արտահայտված մակդիրներ (հիմնականում հարակատար, ենթակայական դերբայներով), որոնք երևույթը ներկայացնում են շարժման ու փոփոխության մեջ, նպաստում մտքի հակիրճությանն ու արտահայտչականությանը՝ «Ողբան մեռելոց, *կապտած* մեռելոց» (Դ, 240): «Երեք աղջիկ գուցե ասեն ինձ «քեռի»՝ լիկայելով իմ *ճերմակացող* քունքերին» (Զ, 240): «Մենք առաջինն էինք, որոնց մկրտեցին ոչ մյուռոնով *թթված*» (Ա, 25): «Ու ջնարակվեց... ահից *կապտած* երկինքը լեղակ՝ լի մխուխ աչքերի մեռելափայլով» (Դ, 270):

Բոլոր դեպքերում, զույն, համ ու հոտ արտահայտող մակդիրների համակարգում գերիշխում են ածականով արտահայտված մակդիրները, որոնք զուտ անհատական ներշնչման ու զգայնության արդյունք են՝ «*լեղի* կարոտ» (Ա, 509), «*տտիպ* սպասում» (Բ, 172), «*շագանակե* աչքեր» (Բ, 118), «*կարմրուկ*

քուն» (Դ, 311), «կծու հայացք» (Բ, 154), «անուշ բարբառ» (Ա, 509), «անալի դրախտ» (Դ, 125), «քնկոտ հոտ» (Դ, 194...) և այլն:

Առարկայի կամ երևույթի բազմահատկանիշ և պատկերավոր բնութագրին ավելի ակնհայտ է համադրական (արևահամ, աշնանաբույր, բուրումնալից, գարշահոտ, զինեբուրմունք, դեղնականաչ, թարախակարմիր, ծանրասև, կապտադեղնապատ, հայրենահամ, հրակարմիր, մաքրաթույր, մոմաբույր, շիկադեղին ...) և հարադրական (ամբուրմունք-անգույն, անգույն-տալտամ, անքուն-անգույն, աշնանաբույր-դեղնաթույր, բոցբեղ-բոցմորուր, դեղնած-ժանգոտած, թուխ-թանաք, թուխ-վարսեղ-հասուն, ծամով-համով, կանաչ-կարմիր, կարմիր-կապույտ, կիսարյունաքամ-գունատ, ճերմակ-փրփուր, մաքուր-ճերմակ, համեղ-առարկայացած, կուրացուցիչ-դառն, նրբին-մոմաբույր, սևահեր-սևաչ, սևմորուր-սևբեղ...) բարդություններով և ածանցական ձևերով (անալի, անգունեղ, արծաթե, բուրիչ, գիշերական, գունային, թփաշ, թխլիկ, ծովական, կապուտակ, կարմրիկ, կարմրուկ, կանաչավուն, շագանակե, շեկլիկ, սևուկ...) արտահայտված մակդիրների գործածությամբ: Պատկանելով հիմնական բառաֆոնդին՝ գույն, համ ու հոտ արտահայտող բառերը բառաբարդման և ածանցման միջոցով ունեն նորանոր բառեր կերտելու լայն հնարավորություն: Սևակի պոեզիայում նս հետաքրքրական է *հոտ* և *բույր* հոմանիշ բառերի իմաստային նրբերանգների տարբերակումն ու նրբիմաստների գործածության մանրակրկիտ հաշվառումը բաղադրյալ կազմությունների մեջ: *Դոտ* բառը գործածվում է հիմնականում բացասական իմաստով, իսկ *բույր* բառը՝ դրական: Մի կողմից՝ *գարշահոտ, ճենճահոտ, ճենճերահոտ, քրտնքահոտ, օտարահոտ, մյուս կողմից՝ աշնանաբույր, բազմաբույր, բուրումնալից, ծաղկաբույր, մոմաբույր, հնաբույր, հողաբույր*: Ինչպես *գույն* բառը, այնպես էլ *համ* բառը բաղադրությունների մեջ հանդես են գալիս ն՝ դրական, ն՝ բացասական երանգավորումով՝ պայմանավորված զուգորդվող բաղադրիչի իմաստով. «Բեզ այլանդակող քանի անապատ՝ մի տգեղ մարմին՝ կապտադեղնապատ» (Գ, 93): «Վեր են ցատկում, լլգալիս շարվում իրար կողքի, լլեվ *թուխ-թանաք*, և պատ-կտրիճ տղամարդիկ լլ Պարսպվում են ու բրզանում» (Դ, 97): «Մի պուտ մթին գիշեր հենց նոր կաթեց լլյս միամիտ-ամանդ *մաքուր-ճերմակ* թրթին» (Գ, 161): Հարադրություններն իրենց մեջ ամփոփում են տեսանելիքի, ճաշակելիքի ու հոտոտելիքի իմաստային հազար ու մի անորստալի նրբերանգներ, որ համադրական ձևերով չէին կարող արտահայտվել: Սևակը երբեմն հարադրություններ է ստեղծում իմաստով իրարից բավական հեռու գտնվող բառերի միջև՝ կարևորություն տալով ոչ միայն բաղադրիչների իմաստային ընդհանրությանը, այլև բարեհնչյունությանը:

Գույն, համ ու հոտ արտահայտող բառերի կրկնությամբ (*անուշ-անուշ, գունակ-գունակ, թխլիկ-մխլիկ, կաս-կարմիր, կարմիր-կարմիր, կապույտ-կապույտ, կծու-կծու, ճերմակ-ճերմակ, շեկլիկ-մեկլիկ, սիպ-սպիտակ, սպի-*

տակ–սպիտակ, սև–սև), որոնք առավելապես հատուկ են խոսակցական լեզվին, Պ. Սևակը, հիմք դարձնելով կրկնությունը, ընդգծում է տրամադրությունը, արտահայտում հատկանշի սաստկությունը՝ «Հնոցի պես բոց աչքերին լլժուխի պես սև–սև կամար» (Ա, 95): «Ու շեկլիկ– մեկլիկ, աչքերով ծավի Այդ հարսը հանկարծ... դառնում է տավիղ» (Դ, 35), «Խայթեց ինչ – որ անուշ ցավով, լլժուխ՝ աճուճ» (Դ, 120):

Երբեմն բառընտրության համար կատարած փոփոխությունները՝ բարդության այս կամ այն բաղադրիչի տղումով, նպատակ ունեն հասնելու մտքի իմաստային բնեռացման: Այս տեսակետից ուշագրավ կազմություն է *սիպ–սպիտակ* գունանվան մեջ բուն գունանվան զեղչմամբ և սաստկական մասնիկի պահպանմամբ ստեղծված հետևյալ օրինակը՝ «Լինենք հարուստ – ես մարմնիդ խենթացնող *սիպ* ոսկով» (անտ.):

Պ. Սևակի չափածոյի մեր քննած կառույցների մեջ կան նաև հեղինակային նորակազմություններ (անգունեղ, բոցբեղ–բոցմորուք, գիշերական (սևաթույր), դառնապերճ, խնկածավալ (խնկաբույր), ժանրասև, կապտադեղնապատ, մաքրաթույր, շագանակե, օտարաիտու և այլն), որոնք աչքի են ընկնում իրենց իմաստային– կառուցվածքային յուրօրինակությամբ: Կազմված լինելով կենսունակ ստեղծված ու արմատներով՝ դրանք կարող են ընդհանրաճանաչ և դառնալ լեզվական– բառարանային միավորներ՝ «Որպես եղածի նկար *անգունեղ* մատներով վարպետ լավ ուրվագծել այնպես, որ կյանքը չայլանդակվի» (Զ, 12): «Եվ չլինել այդպես մոտիկ ու մերձ... լլբյուր ցավերին անբուժ, գալիքին *դառնապերճ*» (Զ, 20):

Հետաքրքիր ու բազմազան են գույն, համ ու հոտ արտահայտող բառերով կազմված համեմատությունները, որոնց միջոցով «առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի տեսանելի, պատկերավոր ու տպավորիչ դարձնելու նպատակով այն համարվում է տվյալ իրողության որևէ հատկանիշին արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով նման որևէ առարկայի կամ երևույթի հետ...»¹:

Գույնի, բույրի ու համի յուրաքանչյուր նրբերանգ կարող է դառնալ բանաստեղծական անկրկնելի պատկերի հիմք՝ արտահայտելով քնարական հերոսի զգացումներն ու ապրումները: Եվ այդ երանգների համադրությամբ, խորիմաստ համեմատությունների միջոցով հեղինակը հասնում է մարդու հոգու աշխարհի խոր ծայրերի բացահայտմանը, ծգտում է անսպասելի, անակնկալ զուգորդությունների՝ անհամեմատելի այնպիսի եզրերի համեմատությամբ, որոնք հաճախ չեն համապատասխանում իրականին: «Մնաս բարև» բանաստեղծության քնարական հերոսը տխուր մտքերից, ծանր հիշողություններից ազատում չունի: Ու ճանճերի նման իրեն կպած, իրենից ոչ մի կերպ չհեռացող մտքերը համեմատում է խնձորի *տոխպ* համի հետ՝ «Ա՛խ, ճանճերն այս, որ չեն պոկվում ինձնից հիմա... Ինչպես ահա *տոխպություն*ն այս խնձորից, որ խածուն ես» (Զ, 160):

Իսկ իր բազմանշանակ ժպիտը նկարագրելու համար հեղինակը «Երկկենցաղ կենցաղ» բանաստեղծության մեջ համեմատության եզր է ընտրում աղը՝

¹ Լ. Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, Ե. 2007, էջ 69:

իր ամենաբնորոշ հատկանիշով՝ համով, և համի հականշխությունը իբրև հիմք ծառայեցնելով՝ ստեղծում է հետաքրքիր համեմատություն՝ «Փակ շուրթերիս ծորի միջով Մի ժպիտ է անվերջ սահում, Մի ժպիտ, որ երկկենցաղ է՝ Ինչպես աղը դառն ու բաղդը» (Զ, 232):

Համ արտահայտող *անուշ, բաղդը* ածականներով բանաստեղծը սիրածի խոսքերը համեմատում է սիրով հունցած իր կյանքին խառնվող թթվամորի հետ. «Որ խառնվում էին սիրով հունցած կյանքիս, *Բաղդը* թթվամորի՝ *անուշ* մակարդի՝ պես» (Գ, 191): Իսկ *կծու* ածականի կիրառությունը ավելի տպավորիչ է դարձնում մարդու եռոթյան խորությունը բացահայտող պատկերը՝ «Եվ մենք հիմա մեզ ինքներես պիտի բացենք հոժարական, Բացենք շերտ-շերտ, փաթեթ-փաթեթ, երբ որ պետք է՝ թեկուզ *կծու* սոխի *նման*» (Բ, 78):

Առարկայական, դիպուկ համեմատություններն օգնում են բացահայտելու մարդու հոգու աշխարհը՝ «Օ՛, ծանր է, անթափանց մղձավանջը այս *սև*, ինչպես կուպր, ինչպես *ծանրասև* վարագույր» (Զ, 19): Իսկ հայոց սարսափազդու կոտորածների լուրը բանաստեղծը հայտնում է համեմատության երկու եզրերում *սև* մակդրի բազմակի կրկնությամբ՝ նույն բանաստեղծության մեջ *սև* գույնը ընդգծելով *ածուխի* միջոցով «Բայց Գուտենբերգին ծնած աշխարհում ի՞նչ կռուկների *սև* երամի պես՝ ի՞նչ տառերն էին լրագրի էջերին թառում... Եվ մի օր հանկարծ այդ տառերը *սև* ի՞նչ առաջ հանգած *ածուխներ* ասես՝ ի՞նչ տառերն էին այրում գրաշարների» (Դ, 73):

Պ. Սևակի խոսքարվեստում նախասիրած մեթոդ է հակադրությունը, «որը ներքին համեմատություն է»² և պայմանավորված է ն՝ ժամանակաշրջանի բազմաբնույթ հակադրությունների գոյությամբ, ն՝ հիացող ու հիասթափվող, տխրող և ուրախացող, բնթշացող ու կոպտացող մարդու հակասական եռոթյամբ:

Գույն, համ, հոտ արտահայտող բառերը հաճախ ծառայում են հակադրվող տարբեր առարկաների ու երևույթների գնահատմանը, մարդու բարոյական կերպարի բացահայտմանը՝ «Դու ես...մեր ճարը օտարամուտ ախտի դիմաց, ինչպես *սև* մեր տաճարը՝ օտարահոտ աղտի դիմաց» (Դ, 239): *Սևի* ու *սպիտակի* հակադրությունն անդրադարձ համեմատություն է դառնում՝ *սևությունը* խտացվելով *սպիտակի* վրա և հակառակը՝ «*Սև* են վարսերդ, ինչքան *ճերմակ* է դեռ փակ կուրծքը քո» (Բ, 16): Իսկ գունամուն-ածականների մեջ ամփոփված առարկայական-գոյականական իմաստով յուրօրինակ հակադրություն է ստեղծվում հետևյալ տողերում՝ «*Ձառ-վառը* նրա ո՞նց էր վայելում ի՞նչ Կարդապետական ճնշող *սևերիդ*» (Դ, 151):

Պ. Սևակը գործածում է ոչ միայն արդեն հայտնի հականիշներ, այլև ինքն է ստեղծում դրանք՝ այդ բառերն օժտելով արտահայտչական նոր կարողություններով: Դրանք հականիշ են դառնում միայն տվյալ կիրառության մեջ՝ պայմանավորված հեղինակային վերաբերմունքով ու նպատակադրմամբ: Ուշագրավ են նրա ստեղծած ինքնատիպ հակադրությունները՝ *անուշ-տոփապ, գունեղ-ճերմակած, գորշ-գույնգույն, գունազարդ-սպիտակ, դեղին-գորշա-գույն, զառ-վառ-սև, թուխ-շեկ, խնկածավալ-օտարահոտ, կարմիր-սպիտակ,*

² Լ. Եգեկյան, նշվ. աշխ., էջ 71:

կարմրուկ-ճերմակ, համով-կծու, սևություն-պայծառություն՝ «...Որ սովահարի իրենց կարմրուկ բունը ներկում են մեր ճերմակ հացով» (Դ, 311): «... Մեկը դեղին՝ դեղնած կարծես ներքին մաղձից, Սյուսը գորշագույն՝ մոխրի նման» (Ա, 44): Գույն և բույր արտահայտող բառերով ստեղծված սևակյան հակադրությունները հաճախ երևում են միևնույն բանաստեղծության մեջ՝ «Կուժկուտ-րուկները, որոնց մոմագույն ծաղկաբերքերից Սոֆիան էր չորս կողմ գինու թանձր բույր... Կարմիր են հագել ու գինու բույրը փոխարկել արյան մի ծանր հոտի» (ԱԶ, 221): «Անհնար է բուրմունքն սպանել՝ առանց դիմելու նրա ազգական Չարահուտության չար օգնությանը» (Զ, 107):

Չեղինակային վերաբերմունքով պայմանավորված հետաքրքիր հակադրություն կա հետևյալ տողերում՝ «Ու կարճուկի համով մեկին Օր ծերության դարձրենք կին մի անատան կծու խոջա» (Դ, 128):

Հակադրություն ստեղծելիս Պ. Սևակը օգտվում է լեզվական տարբեր միջոցներից ու հնարավորություններից, որոնք երբեմն պայմանավորում են դրանց ոճական արժեքը: Սևակյան հակադրություններում ամենից շատ գործածական է բաղադրիչների կապակցության շաղկապական եղանակը՝ «Ըմբռնչենցիք ցավով անդառնալի հաճույքի հետ միասին, Բաղք ու դառն շինուկներն իմ՝ սրբագործված արցունքիս մեջ» (Զ, 15): «Ծնվում է ինքը՝ մեր արշալույսը, Որ թուխ ու շեկ է որպես խառնածին» (Ա, 456):

Հակադրությունն ավելի ուժեղ է արտահայտվում հատկապես ոչ թե... այլ գուգարական շաղկապի միջոցով՝ «Ես ինչպե՞ս եմ կյանքին նայել էժան աչքով՝ Ոչ թե անուշ մի հիացքով, այլ մի տոխպ, հաճախ դառն, Նաև կծու մի հայացքով» (Բ, 154):

Պ. Սևակը հակադրություններ է ստեղծում նաև ան ժխտական նախածանցի օգնությամբ՝ կիրառելով նույն բառի դրական և ժխտական ծների կրկնություն՝ «Դու համ ես դառնում, լիսել եթե չկաս՝ անհամություն է» (Ա, 476):

Պ. Սևակի խոսքին հարազատ է բառի փոխաբերական իմաստով կիրառությունը, որի «նպատակը ոչ թե առարկայի պարզ, սովորական անվանումն է, այլ նրա հուզական (արտահայտչական) բնութագիրը»³: Տարբեր երևույթների ու հարաբերությունների փոխաբերական ընկալումը, որը հնարավորություն է տալիս արտահայտելու հուզական ամենաբազմազան նրբերանգներ, Սևակի չափածոյի ոճական կառույցի ամենատեղական բաղադրիչն է: Գույն, համ ու հոտ արտահայտող բառերով կազմված նոր, ինքնատիպ ու թարմ փոխաբերությունները արտահայտվող միտքը դարձնում են ավելի պատկերավոր, զգացմունքը՝ անմիջական ու խոր՝ «Իթվել էր կարծես հողը բովանդակ, լի ու թթվել էին ծովերը բույր» (Դ, 277):

Առարկան «այլևայլ հատկանիշներով ընկալելը, դրա նկատմամբ տարբեր բովանդակության վերաբերմունք արտահայտելու հնարավորությունը կարող է բառն օժտել տարբեր ու բազմապիսի փոխաբերական երանգներով»⁴: Բուսական աշխարհին հատուկ գույները, բույրերը վերագրվում են մարդուն, ծառայում մարդկային հոգեվիճակների ու զգացմունքների բացահայտմանը՝

³ Եզեկյան, Նշվ. աշխ., էջ 73:

⁴ Մ. Անլոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 93:

«—Թորգո՛ւմ ախպեր, դե ձեռքդ բեր, Ի՞նչ ես *թքվել*, տո՛, տնաշեն» (Գ, 26): «...Ու քիչ բնեն, որ չլսեն մեր *քացախած* քրթմնջողը» (Զ, 144):

Փոխաբերաբար գործածելով՝ այս բառերը խոսքը դարձնում են պատկերավոր, կենդանի ու արտահայտիչ, հնարավորություն են տալիս խոսակցելու միօրինակությունից ու նույն բառը շատ հաճախ կրկնելուց, հարստացնում են լեզվի բառապաշարը՝ դառնալով հոմանիշների առաջացման աղբյուր՝ «Դու հորովել անուշ ծորուն, լի՞ճալ գութանի, *արծաթ խտփի*» (Ա, 152): «Եվ այսօր՝ *դառնաղի* այս օրերում բռնե՛լ դեպի եթեր» (Զ., 20): «Շագանակե իր աչքերը պատսպարած թարթիչներով՝ Նա թափանցիկ իր ականջին պահ է տալիս անհնազանդ մի *սև խոպուպ*» (Դ, 118): «...Երբ քաղաքային *գորշ* փողոցներում լի՛նջ—որ անձրև է թախծում ինքն իրեն» (Ա, 488):

Պ. Սևակի չափածոյին բնորոշ է նաև տարբեր բառածների, շրջասույթների և դարձվածային միավորների գործածությունը՝ *աղի արցունք, անուշ մարսական, անուշ լինի, բերանը քաղցրացնել, բերանի համ(ից) զրկվել, դեղին դև (ոսկի, կապիտալ), դեղին կապիտալ, կանաչ—կարմիր (ծիածան), համն առնել, համը հանել, համ տալ, համ—դամ, ծերմակ դև, ծերմակ սպանդ, սպիտակ տուն, սև բիծ, սև դև (չար ուժեր), սև ծանուցագիր, քաղցր աչքով նայել...* «Եղբայր, արդեն *համն ես հանում*» (Ա, 433): «Վերցրեցեք—կերեք, *Սնուշ—մարսական*» (Դ, 313): «Դու չգիտես *դեղին դևին* լի՞ Գայլի ախորժակով» (Ա, 187): «Բայց մենք չենք զրկվել մեր *բերնի համից*» (Ա, 508): «Չեն հղում եթե *սև ծանուցագիրը*, միայն նրա համար, Որ նույն խրամատում ընկել է և գնդի գրագիրը» (Ա, 82):

Հաճախ հեղինակը բանաստեղծական մեկ ընդհանուր շղթայի մեջ կողք կողքի գործածում է և՛ սովորական, և՛ դարձվածային հարադրությունները, և՛ ժողովրդական այլ բառածներ՝ «Մինչ նազ անուշ խորովածի *համ—դամը* գա, ես, տանտիրոջ իրավունքով, ձեզ թամաղա: Դեհ, *խմողաց խումը անուշ*, Եռեփ գինու *կումը անուշ, խորովածի հումը անուշ...* Խմենք այնպես, կարծես լի է... երևիսեքի *դառը լացով*, լի՛խմենք, Իետո *բերաններս քաղցրացնենք* լի՛րանց թմփլիկ *թուշիկների անուշ պաչով*» (Ա, 424):

Այսպիսով, գույն, համ ու հոտ արտահայտող բառերը, կիրառվելով գեղարվեստական գրականության մեջ՝ հատկապես չափածոյում, ձեռք են բերում որոշակի ոճական—գեղագիտական արժեք, խոսքը դարձնում արտահայտիչ, պատկերավոր, հարստացնում լեզվի բառապաշարը նոր իմաստներով և իմաստային նրբերանգներով: Դրանք ծառայում են խոսքի կենդանությանը՝ դառնալով բանաստեղծական ներշնչանքի աղբյուր: Տեսանելիքի, ծաշակելիքի և հոտոտելիքի իմաստային դաշտերի մեջ մտնող բառերի ոճական արժեքի բազմակողմանի քննության համար հայ գեղարվեստական գրականությունը մի ամբողջ ուսումնասիրության նյութ կարող է տալ, և Պ. Սևակի չափածոյում արտացոլված գույն, համ ու հոտ արտահայտող բառերի մի սովոր խմբի գեղագիտական արժանիքների գնահատումը լայն հնարավորություն կարող է ընձեռել մեր դասական այլ հեղինակների ստեղծագործության ոճական արժեքները բացահայտելու գործում:



1. Արիստակեսյան Ա. Վ., Պարույր Սևակ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984:
2. Բաղդիկյան Պ. Ս., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., «Լույս» հրատ., 1973:
3. Եզեկյան Լ. Կ., Ոճագիտության ուղեցույց, Եր., 2007:
4. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007:
5. Մելքոնյան Ս. Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., «Լույս» հրատ., 1984:
6. Պապոյան Ա. Հ., Ակնարկներ Պ. Սևակի բառապաշարի և տաղաչափության, Եր., 1991:
7. Պապոյան Ա. Հ., Պ. Սևակի չափածոյի բառարան, Եր., ԵՊՀ հրատ., հ.1, 1981, հ.2, 1982:
8. Պապոյան Ա. Հ., Պ. Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., «Լույս» հրատ., 1970:

С. ГРИГОРЯН

СТИЛИСТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ СЛОВ, ВЫРАЖАЮЩИХ ЧУВСТВЕННЫЕ ВОСПРИЯТИЯ В ПОЭЗИИ П. СЕВАКА

В поэзии П. Севака много языковых структур, которые выражают чувственные восприятия. Они являются богатым материалом для морфологических и синтаксических, стилистических исследований. Стилистическая значимость слов, выражающих чувственные восприятия, в поэзии Севака выражается эпитетами, сравнениями, метафорами, перифразами и фразеологическими оборотами. Мы исследовали также словообразовательные особенности этих единиц. Отмечены авторские неологизмы, например: *боцбег*, *хнкацавал*, *дарнаперч*, *шаганак* и т.д.

В нашем исследовании доминантны эпитеты, которые состоят из словообразований цветов. Такие эпитеты бывают и суффиксальными, и сложными словами, например; *каначадегин*, *гунег*...

Гораздо редко встречаются образования, которые состоят из слов, выражающих чувство вкуса, например: *леги карот*, *ангамутюн*, *ттип спасум*.

S. GRIGORYAN

THE STYLISTIC VALUE OF THE WORDS EXPRESSING SENSUAL PERCEPTIONS IN P. SEVAK'S POETICS

P. Sevak's poetics is rich in linguistic structures expressing sensual perceptions which serve as a serious subject for investigation from morphological, syntactic as well as from stylistic points of view.

The stylistic value of the words expressing sensual perception in P. Sevak's poetics is notable for revealing epithets, metaphors, similes, paraphrases and phraseological units. The word-formation of the units under study is also taken into consideration. We have also considered the author neologisms among which are words like *botsbegh*, *khnkatsaval*, *darnaperch*, *shaganake* and so on.

Our investigation is rich in the epithets expressed by color-terms which are presented in numerous compound and derived forms, for instance *kanachadeghin*, *gunegh*.

The structures expressing taste perception are more seldom used, for instance *leghi karot*, *anhamutyun*, *ttyp spasum*.